Երազ 1 կամ ո՞վ է ինքզինք արթուն զգացողը

Ինչ-որ շքեղ հյուրանոցային համարում եմ:
Գործնական տեսքով նստած եմ համակարգչի առաջ: Տեխնիկայի վերջին խոսք է: Դիմացիս հարթ էկրան է, որի անտեսանելի մասերը երևում են մկնիկի ցուցիչի սահքին զուգընթաց: Մինչ այդ՝ դիմացի պատն է երևում: Հոլոգրաֆիկ էֆեկտ է երևի: Էկրանի երևացող մասը չերևացողից առանձնանում է սև մարմարի ոլորագիծ քանդակ հիշեցնող եզրաշերտով:
Մի էկրան էլ դիմացի պատի վրա է՝ ավելի մեծը: Ցանկացած պահի կարելի է պատկերը փոխանցել այնտեղ:
Կիսաբաց դռնից ժպտադեմ մի մանկիկ է ներս մտնում և մանրաքայլ մոտենում ինձ: Սպիտակ ու երկար ներքնաշապիկով է, ծանոթ դեմք ունի՝ հարազատ դիմագծեր: Ո՞ւմ երեխան է… ոչ այն է, գիտեմ, ոչ այն է, չգիտեմ, բայց հարցին կարևորություն չեմ տալիս: Մանկիկն առույգորեն ձեռքն է առնում մկնիկը, շարժում էկրանի վրայով:
– Ա՜յ սա մակարդակ է…– ասում է:
Կանգ է առնում երաժշտության վրա: Սրտաձև կարմիր նշան է՝ կենտրոնում սոլի բանալի: Ակտիվացնում է այն, համակարգիչն անմիջապես միանում է համացանցին: Պատկերն ավտոմատ փոխանցվում է պատին, հնչում է երաժշտությունը: Արագ ու հատու ռիթմ է՝ ընդգծվող, ազդու բասով: Խայտաբղետ պատկերների կադրերը սրընթաց հաջորդում են միմյանց. ինչ-որ լողորդ բարձր ժայռից նետվում է ծովը… մեկը սահնակով ոլոր-մոլոր սուրում է սարի լանջն ի վար… կիսամերկ, փոքր-ինչ դուրս ցցված փորերով պարող կանայք… սյունաձողի շուրջ օձագալար տվող գեղեցկուհի… մի հրթիռ բախվում է հսկա պատին ու պայթում… ռոբոտատիպ ինչ-որ էակներ ծամածռվում են ու կերպափոխվում…
Նկատում եմ, որ մանկան աչքերը սկսում են խամրել: Սրտխառնուքի շարժումներ է անում ու կորանում: Ձեռքս պահում եմ կրծքի տակ: Նվաղելով սահում է ցած: Հատակի փոխարեն անկողնուս սպիտակ սավանն է, պարզվում է… պղտոր հեղուկն արագորեն տարածվում է դրա վրա՝ տհաճ հետք թողնելով… խայտառակություն… ու՞մ երեխան է տեսնես, ո՞վ է տերը… ուզում է շնչել, հազալ, չի կարողանում… ավելի է նվաղում… բերանից լերդացող արյան սև, բարակ շիթ է ծորում սավանիս վրա… տե՜ր աստված, մի՞թե մեռնում է…
– Էհե՜յ, ո՞վ կա մոտիկ, օգնեցե՜ք… SO՜O՜O՜S…

…

Արթնանում եմ թևերի թափահարության ձայնից: Պարանոցիս ու ճակատիս սառը քրտինք կա: Թևերի բուռն թափահարումը նորից է լսվում: Թեև վարագույրը ծածկել է պատուհանս, բայց գլխի եմ ընկնում, որ ճնճղուկների փոքրիկ երամ է վեր թռածել՝ ինչ-որ բանից վախեցած:
Ի՜նչ սոսկալի երազ էր…
Արդյո՞ք այն մանկիկը… Ո՜չ, չի՜ կարող պատահել…
Ահավոր է նույնիսկ այդ մասին մտածելը, ու՞ր մնաց, թե բառի վերածեմ:
Ելնում, բացում եմ վարագույրը:
Դրսում սովորականի պես արևը վեր է բարձրացել ու զվարթ շողում է՝ հավանաբար տեսածս երազից անտեղյակ:
Չնայած, ո՞վ գիտե… ասում են՝ աշխարհը միասնական է: Մեկ էլ տեսար՝ արևն էլ խամրեց, ու պարզվեց, որ այս արթմնի վիճակն է՞լ է երազ… Չէ՞-որ տեսածս երազի մեջ էլ էի ինձ արթուն զգում: Ամեն ինչ այնքա՜ն իրական էր, այնքա՜ն տագնապահարույց: Եվ արդյո՞ք այս լայնարձակ աշխարհն էլ մի չքնաղ հյուրանոց չէ իրականում: Իսկ ի՞նչ ասել է՝ «իրականում»… ի՞նչն է, որ մնում է արթնանալուց հետո: Մի՞թե սոսկ նոր աշխարհում արթուն լինելու զգացողությունը կամ, որ նույնն է՝ իրեն արթուն զգացողը: Մնացյալը երա՞զ է անցողիկ. մի երազում մեռնող, մյուսում հառնող մանկիկը, մի աշխարում խամրող, հաջորդում հարատև թվացող արևը… մինչև ու՞ր այդպես… Ճանաչե՜լ է պետք իրեն արթուն զգացողին:
Սա՜ է բոլորը:

Երազ 2 կամ սուրացող գնացքներ

Կանգնած եմ կառամատույցին:

Սպասում եմ այն գնացքին, որն ինձ կհասցնի հեռավոր, երանելի մի վայր:

Ահա, վերջապես եկավ...

Սուրում է կողքովս՝ կարծես կանգ առնելու ոչ մի մտադրություն չունի...

Սուրում է, ինչպես ժամանակը՝ սահուն, հավասարաչափ: Գլխի եմ ընկնում, որ սա, ըստ էության, հենց ժամանակի գնացք է, որ կա. բայց և զգում եմ՝ հաստատ գիտեմ, որ հենց այն գնացքն է, որին սպասում էի:

Ահա եկե՛լ է. բայց ինչպե՞ս նստեմ, եթե կանգ չի առնում:

Նկատում եմ, որ կառամատույցին էլի՛ մարդիկ կան: Ահա մեկը հենց ընթացքից նետվում է գնացքի մեջ: Հետո՝ մյուսը: Հետո՝ երրորդը: Իսկը՝ ոնց որ ֆանտաստիկ կինոնկար...

Կողքիս հարազատ մարդկանց շունչ եմ զգում: Հա՛, եկել են ինձ ուղեկցելու և ճանապարհ դնելու. քաջալերում ու համոզում են, որ ե՛ս էլ մյուսների պես ցատկեմ, քանի որ գնացքը կարող է այդպես էլ կանգ չառնել: Իսկ ես անպայման պետք է նստեմ, որովհետև հաջորդը շա՛տ ուշ կլինի, գուցե՝ շատ տարիներ անց: Եվ գուցե՝ դա՛ էլ կանգ չառնի, ինչպես այս մեկը՝ արդեն եկածը...

Ուրիշ ելք չկա՛:

Պետք է փորձե՛լ:

Մյուսների պես կողքանց նետվում եմ սուրացող գնացքի դռներից մեկի կողմը: Ավա՜ղ, պահը ճիշտ չէր ընտրված... ետ եմ մղվում գնացքի կանաչ պատից: Փառք աստծո, բոլորովին չեմ վնասվել: Փորձում եմ երկրորդ անգամ. էլի՛ անհաջող... երրորդ անգամ՝ նու՛յնպես...

Չնայած անհաջող փորձերիս՝ այնուամենայնիվ հավատու՛մ եմ, ներքուստ համոզվա՛ծ եմ, որ ի վերջո հայտնվելու եմ գնացքի ներսում: Չէ՞-որ այլ կերպ չի կարող լինել: Բոլորին, այսպես թե այնպես, վաղ թե ուշ՝ հաջողվում է կառամատույցից անցնել գնացքի մեջ: Ինչու՞ հատկապես ինձ այդ բանը չպետք է հաջողվի...

Կյանքումս շա՛տ գնացքներ եմ նստել, բայց դրանք միշտ էլ կայարանների մոտ սուսիկ-փուսիկ կանգնած են եղել, երբ նստել եմ: Ինչու՞ այս մեկը կանգ չի առնում...

Գուցե սա կիսակայարա՞ն է. կամ՝ ընդհանրապես կայարան չէ՞... Հապա ինչի՞ համար է նախատեսված այս կառամատույցը...

Բարեբախտաբար գնացքը սկսում է դանդաղել:

Ինչու՞...

Հա՛, երևի մեքենավարը հեռվից նկատել է իմ անհաջող փորձերը:

Ինչ-որ զգայարանով նաև հասկանում եմ, որ գնացքը կանգ կառնի ընդամենը մեկ վայրկյանով՝ ո'չ ավել, և ես պետք է հասցնեմ այդ ընթացքում հայտնվել գնացքի ներսում:

Ահա և իմ առջև ամենավերջին վագոնն է՝ յուղոտ, անհյուրընկալ... Վագոնի ներսի կողմից ինձ վրա զգում եմ ինչ-որ մեկի հեգնանքով լի հայացքը՝ դեղնականաչ, ֆոսֆորափայլ աչքերով: Մի՞թե Մեֆիստոֆելն է...

Այնուամենայնիվ՝ գնացք եմ բարձրանում: Ի՞նչ արած, երևի սրա՛ն եմ արժանի...

Ներսում էլի՛ ուրիշ բաներ եմ տեսնում, բայց...

Հաստատ ամեն ոք որոշ բաներ իր համար գաղտնի պահելու իրավունք ունի, ուստի թույլ տվեք այլևս ոչինչ չպատմել:

Ինքնե՛րդ ձեր ուզածը կտեսնեք, երբ պահը կգա, և դուք կորոշեք սպասել ձեր գնացքին՝ այն գնացքին, որը ձեզ կարող է ի վերջո հասցնել հեռավոր, երանելի մի վայր:

Վաղ թե ուշ՝ անպայման կսպասե՛ք:

Ուրիշ ելք չկա՛:

Միայն թե՝ մտածեք, թե ինչպե՞ս եք հայտնվելու սուրացող գնացքի ներսում, որ Մեֆիստոֆելին հանդիպելու կարիք չզգացվի:

Ասում են, թե դա լավ նշան չէ...

Երազ 3 կամ հետապնդում

Մթնշաղ է շուրջս:

Դիմացս անտառածածկ, կանաչ սարեր են երևում. գեղեցիկ են, իրենց գիրկը կանչող:

Որոշում եմ սլանալ դեպի գագաթները:

Փոքր-ինչ թափ եմ առնում և կտրվում գետնից:

Բոլորովին չեմ զարմանում, այլ ուրախ եմ, որ այսպես հեշտ կարող եմ թռչել, սավառնել:

Շատ հաճելի բան է՝ ի ծնե մարդուն տրված:

Ահա հասնում եմ գագաթներից մեկին, իջնում այնտեղ:

Հեռվում լայնարձակ դաշտեր են երևում, տեղ-տեղ գյուղեր կան փռված:

Որոշում եմ օդով մի փոքր զբոսնել:

Մոտենում եմ գյուղերից մեկին և իջնում գյուղամիջում:

Այստեղ տարեց մարդիկ կան նստած, խաղաղ զրույց են անում իրար հետ:

Ակնհայտորեն իմ հայտնվելը նրանց դուր չի գալիս, սպառնալից նայում են դեպի իմ կողմը: Հավանաբար ինչ-որ բան այնպես չեմ արել. հավանաբար երկնքից գյուղամեջ իջնելը անթույլատրելի արարք ու մեղք է համարվում, իսկ ես՝ դա չգիտեի:

Տարեց մարդկանցից մեկը ելնում է տեղից և քայլում դեպի ինձ:

Աչքերից լավ բան չեմ գուշակում:

Նորից թափ եմ առնում և թռչում դեպի վեր՝ փորձելով հեռանալ:

Մարդը վազում է իմ հետևից. հաստատ որոշել է բռնել ինձ:

Թռչում եմ դեպի բլուրների կողմը:

Մարդը հետ չի մնում ինձնից. հեշտորեմ վազում է բլուրներն ի վեր, անցնում ձորակները: Մեր հեռավորությունը ո՛չ ավելանում է, ո՛չ էլ պակասում:

Ա՛յ քեզ բան... այդ ի՞նչ զորություն կա այդ մարդու մեջ, որ բոլորովին չի հոգնում: Լավ է, որ գոնե թռչել չի կարողանում կամ գլխի չի ընկնում, որ կարող է և թռչել: Ի՞նչ մի դժվար բան կա դրանում:

Մի տեղ պետք է ցած իջնե՞մ, թե չէ: Իսկ մարդը՝ կպած գալիս է: Ինչպե՞ս ազատվեմ այս հետապնդումից:

Գուցե ցած իջնեմ ու բարիշե՞նք: Բայց չէ՛... մարդը, քանի գնում, այնքան զայրակնած է երևում ու անզիջում: Հաստատ որոշել է վերջս տալ...

Որոշում եմ խորամանկ քայլ անել: Սավառնում եմ դեպի Արարատի կողմը: Գուցե մարդը դեմ առնի սահմանին ու կանգնի՞: Դա՛ է իմ վերջին հույսը...

Եվ իրոք՝ հենց այդպես էլ լինում է: Մարդը վերջապես կանգ է առնում փշալարերի մոտ և սպառնագին բռունցք թափահարում իմ կողմը՝ ևս մի անթույլատրելի խախտում անելուս համար:

Հասնում եմ Արարատի գագաթին և թեթև վայրէջք կատարում այնտեղ:

Վերջապես պրծա՛ տհաճ հետապնդումից:

Տե՛ր աստված, ի՛նչ հրաշալի տեսարան է բացվել իմ առաջ...

Որքա՛ն խաղաղություն կա, որքա՛ն անդորր...

Իսկ գյուղերը հեռվում հանգիստ քուն են մտել:

Երազ 4 կամ ներդաշնակ կտկտոցներ

Դրսում անձրևը մերթ վարարում է, մերթ բարակում: Դա հասկացվում է տանիքից լսվող կտկտոցներից: Ժամացույցով նույնիսկ կարելի չափել դրանց արագությունը:

Ականջ եմ դնում ժամացույցի զարկերին:

Հետո անցնում եմ սրտիս տրոփյունին, որը զգում եմ ծոծրակիս ու քունքերիս: Երևի ճնշու՞մս է բարձր...

Փոխնեփոխ կտկտոց, զարկ ու տրոփյուն լսելով՝ աննկատ քնով եմ անցնում:

Ռիթմիկ ձայները շարունկվում են: Այս անգամ դրանք նման են Մորզեի հաղորդագրության և ավելի բարձր հաճախականություն ունեն: Բանասիրական տերմիններով ասած՝ դրանք մեղմաձայն, սուր և ընդհատ-ընդհատ սուլոցներ են:

Հազիս զինվորական համազգեստ է: Ականջակալներ հագած՝ կուրսի մեր ամբողջ խմբով նստած ենք ռադիոկապի դասասենյակում: Սպիտակահեր, ծերուկ փոխգնդապետը մերթ ընդ մերթ խորամանկ հայացք է նետում իմ կողմը, կարծես ուզում է ասել. «Посмотрим, сможешь ли справиться с новой задачей?...»:

Ծերուկին բոլորս հարգում ենք: Խստաբարո է՝ կարգ ու կանոն պահանջող, բայց և առիթը եղած դեպքում չի խուսափում մեզ հետ զրուցելուց ու կատակաբանելուց:

Փորձում եմ կենտրոնանալ ականջներիս մեջ հնչող ռադիոգրի վրա և վերածել այն հոդաբաշխ լեզվի.

- Օրերն էլ են կտկտում. եթե ուշադիր լինես, կարող ես լսել: Ցերեկը՝ կտտոց, գիշերը՝ դադար.

- Ամիսների կտկտոցն էլ է հնարավոր լսել. բայց նախ ինքդ քեզ վրա պետք է աշխատես, որպեսզի կարողանաս ճիշտ հաշվել լուսնի փուլերը: Լիալուսինը՝ կտտոց, նորալուսինը՝ դադար.

- Տարիներիդ կտկտոցը պարզորոշ կլսես, երբ վրա կհասնեն երկրային կյանքիդ վերջին պահերը.

- Դարերի կտկտոցը լսում են միայն երանելիներն ու սրբերը, իսկ դու դեռ շա՛տ հեռու ես այդպիսին լինելուց: Դեռ էլի՛ մի քանի կյանքեր պետք է ապրես.

- Հազարամյակների կտկտոցն էլ է հնարավոր լսել, իհարկե: Բայց դա անում են միայն Աստծուն շատ մոտ կանգնած էակները: Եվ գիտե՞ս, թե նրանք ինչ են պնդում. համոզված ասում են, որ հազարամյակների կտկտոցի և քո սրտի զարկերի միջև ոչ մի էական տարբերություն չկա:

Ինչպե՞ս թե... Ո՞վ է ասում...

Անսպասելիությունից զարմանքս չափազանց բարձր եմ արտահայտում: Բոլորը շրջվում են դեպի իմ կողմը: Ծերուկը կտրուկ ելնում է տեղից և սպառնագին դիմում ինձ.

– Тихо там, товарищ курсант! А то - выгоню из класса…

Արթնանում եմ և էլ չեմ կարողանում քնել:

Դրսում շարունակում է անձրև տեղալ:

Երևի մինչև լույս չի դադարի:

Ես նույնիսկ դա՛ հաստատ չգիտեմ, իսկ ռադիոգրերն արդեն հազարամյակներից են խոսում:

Կյանքը շարունակվում է...

Երազ 5 կամ մի դրվագ Ուսուցչի վաղեմի հիշողությունից

Կարծես թե մերոնց չի հաջողվել հրդեհի ճարակ դարձնել հույների և նրանց դաշնակիցների նավատորմիղները: Երևում է, հունական ուժերը հաջողությամբ ետ են մղել տրոյացիներին, ջլատել նրանց, և հիմա, առափնյա բլրի գագաթից հեղեղի պես սրընթաց գրոհելով, Տրոյայի հերոս պաշտպաններին քշում են իրենց անառիկ քաղաքի պղնձակուռ դարպասից ներս: Հեկտորը նահանջի հրաման է արձակել, և ինքն արդեն ատամնավոր պարսպի գագաթին է. հուսահատ դիտում է յուրայինների նահանջն ու դեռևս ընթացող թեժ մարտը: Պարիսն իր զորախմբով արդեն շատ մոտ է դարպասին: Քաջաբար կռվում են՝ կամաց-կամաց ետ քաշվելով:

Ագամեմնոնն իր հերթին կանգ է առել բլրի գագաթին և ցնծությամբ դիտում է իր դյուցազունների հաղթական գրոհը: Ահա, մեծ Այաքսն իր ամրակուռ տեգի անկասելի ուժով գետին է տապալում հերթական զոհին՝ ճեղքելով նրա զրահապատ կուրծքը: Փոքր Այա՛քսն էլ նրանից ետ չի մնում: Մենելայոսը կատաղի նախճիր է գործում շուրջը՝ բարձրաձայն հայհոյելով այս անարդար աշխարհն ու ավազակ տրոյացիներին: Չի՛ խնայում ոչ ոքի. նույնիսկ Արամազդի հասցեին է լուտանքներ թափում: Կատաղած է անասելի, ինչպես էգին կորցրած ցուլը…

Բայց ու՞ր է Ուլիսը. ինչ-որ չի երևում… Ահա, տեսնում եմ նրան. խաղաղ կանգնել է բլրի ստորոտի մի ժայռի մոտ՝ իր հսկա մարմնով փակելով ժայռի ծերպը: Այնտեղ ևս մեկը կա. հազիվ է երևում: Ողորմա՛ծ աստված… չէ՞ որ դա իմ սիրելի ուսուցիչն է՝ Պիսանդրոսը, որը նաև Ուլիսի սիրելի սանն է: Երկար տարիներ մարտարվեստ, բարոյագիտություն և փիլիսոփայություն է ուսանել Իթաքեի արքայանիստ պալատում, իսկ հիմա բախտը նրան կռվի է հանել Տրոյայի կողմից՝ հույների դեմ: Ակամա՝ նաև իր նախկին ուսուցչի դեմ:

Խորամա՛նկ է Ուլիսը. միաժամանակ և՛ հասցրել է զինաթափել իր սանին, և՛ պաշտպանում է նրան յուրայինների հարվածներից: Իրեն թվացել է, թե իր այդ քայլը աննկատ կմնա բոլորից մինչև մարտի ավարտը: Բայց բլրի իր բարձունքից դա արդեն նկատել է Ագամեմնոնը և հեգնանքով քմծիծաղ է տալիս: Հասկացել է, թե բանն ինչ է, և ձեռքի հրամայական շեշտով նշան է անում, որ Ուլիսը սպանի իր գերուն: Պարսպի վրայից այդ դրվագը նկատել է նաև Հեկտորը և խիստ մտահոգ է իր քաջ ու հավատարիմ զինակցի ճակատագրով:

Էլի մի փոքր հապաղելուց հետո Ուլիսը մի կողմ է քաշվում ժայռի ծերպից: Պիսանդրոսը հարգանքով ու սիրով լի հայացքը հառում է ուսուցչի դեմքին: Հետո հանկարծակի մի շարժումով արագ ետ է խլում նրա ձեռքից հացենու կոթով իր տեգը և սլանում դեպի ոչ պակաս սրընթաց արշավող Մելենայոսի կողմը:

- Կա՛նգ առ, խելագա՛ր, դեպի ստույգ մա՛հ ես գնում,- հուսահատ գոռում է նրա հետևից Ուլիսը:

Պիսանդրոսն ընդառաջ է վազում Մելենայոսին և իր տեգը վազքից ձեռք բերած ամբողջ թափով դեմ տալիս նրա կրծքին: Վրիպում է մի փոքր և անմիջապես կացնի ծանր հարված ստանում ճակատին՝ ուղիղ աչքերի մեջտեղը… Անկենդան փռվում է գետնին: Ուլիսը շտապում է նրա մոտ, կռանում վրան: Բանը բանից անցե՛լ է… Սպառնագին մի հայացք է նետում Ագամեմնոնի կողմը: Վերջինիս տիրական քմծիծաղն արդեն վեր է ածվել չարախինդ հռհռոցի: Իսկ Հեկտորի դեմքի ոչ մի մկանը չի շարժվում, թեև զգում եմ, որ ներքուստ խոր վիշտ է ապրում: Նույնպիսի վիշտ եմ ապրում նաև ես, գուցե ավելի խորը…

Իսկ ե՞ս ինչով եմ զբաղված այդ ընթացքում…

Մարտի գնալուց առաջ Պիսանդրոսն ինձ հանձարարել է մնալ քաղաքում և լուծել պարզ թվերի խնդիրը: Այդ մտքին հավանություն է տվել նաև Հեկտորը՝ այն պատճառաբանությամբ, որ, ո՞վ գիտե, գուցե դրանից է կախված Տրոյայի ճակատագիրը:

Պետք է սովորել համապիտանի մի բանաձևի օգնությամբ թվերի անվերջ շարքում որոշել պարզ թվերի տեղը, որքան էլ որ մեծ լինեն դրանք: Ես համոզվածություն եմ արտահայտել, որ այդ խնդիրը լուծում ունի, ուստի և՝ ինձ են հանձնարարել այն լուծել: Պարզ թվերը սրբերի ու մարգարեների խորհրդանիշերն են հանդիսանում: Մարդկանց բազմության մեջ պետք է կարողանալ անսխալ հայտնաբերել պատգամախոսներին, որպեսզի հնարավոր դառնա նրանց միջոցով իմանալ աստվածների կամքը, Արամազդի կամքը: Այլապես՝ Ֆորտունան լիովին անկանխատեսելի կդառնա և մշտապես տհաճ անակնկալներ կմատուցի մարդկանց:

Փորձում եմ կտրվել մարտը դիտելուց և կենտրոնանալ այդ կարևոր խնդրի վրա: Հինգերորդ աստիճանի հավասարում եմ ստացել: Ատլանտ Ասուրամայայի վաղեմի մի ձեռագրում գրված է, որ նման տիպի հավասարման բոլոր հինգ լուծումներն էլ պարզ թվեր պետք է լինեն: Մնում է գտնել լուծման կորսված եղանակը, այնուհետև, փոխելով գործակիցների արժեքները, ստանալ ցանկացած մեծության պարզ թիվ: Թեև հաջողվել է մի փոքր պարզեցնել հավասարման նախնական տեսքը, բայց դրանից այն կողմ գործն առաջ չի գնում: Ոչ մի կերպ չի հաջողվում կենտրոնանալ, ինչպես հարկն է: Զնափոխությունների երկար մագաղաթի վրա ինչ որ տեղ երևի փոքրիկ սխալ եմ թույլ տվել և այդպես էլ չեմ կարողանում գտնել, թե հատկապես որ մասում: Հարկավոր է ամեն ինչ սկզբից սկսել: Բայց, հենց որ փորձում եմ կենտրոնանալ մագաղաթի սկզբնամասի վրա, մարտի գոռում-գոչյունները կրկին շեղում են ինձ: Արդեն սկսում եմ վհատվել…

Պարսպի ատամներից մեկի մոտ՝ Հեկտորի կանգնած տեղից բավականաչափ հեռու, մի ջահել գեղեցկուհի է հայտնվում և սկսում դիտել մարտը: Ճանաչում եմ նրան. Հեղինեի սպասուհին է, երևի եկել է, որ լուր տանի իր տիրոջ համար: Կարճ շրջազգեստի տակից երևում են ճերմակ, գեղեցիկ սրունքները: Միայն սա՛ էր գլխիս պակաս… Նկատում եմ, որ մարտը դիտելուց զատ, չքնաղ սպասուհին մերթ ընդ մերթ սիրալիր հայացքներ է նետում իմ կողմը: Չմոտենա՞մ արդյոք… Գիտեմ, որ դրանով կհարուցեմ Հեկտորի կատաղի զայրույթը: Նայում եմ արքայազնի կողմը և տեսնում, որ ամբողջովին կլանված է մարտով:

Ի վերջո, հաղթահարելով մտավախություններս՝ մոտենում եմ գեղեցկուհուն և թեթևակի հպվում նրան…

…

Արթնանում եմ ներքին հրահանգից, որ պետք չէ նման իրավիճակում բանը խայտառակ ավարտի հասցնել:

Դեռ երազի ազդեցության տակ եմ և մտածում եմ քնաթաթախ:

Տրոյան, այնուամենայնիվ, կկործանվի…

Եվ պատճառը միայն Պարիսն ու չքնաղ Հեղինե՛ն չեն, ո՛չ: Օլիմպոսի աստվածները նրանց վաղու՛ց են ներել, թույլ տալով, որ ազատ կենակցեն իրար հետ, երբ ուզենան:

Եթե կուզեք իսկությունն իմանալ, ապա հիմնական պատճառն այն եղավ, որ այդպես էլ այն ժամանակ անավարտ մնաց պարզ թվերի խնդրի լուծումը, և Ուլիսի փայտե ձին անարգել մուտք գործեց Տրոյա:

Հույնե՛րն էլ հետագայում չկարողացան այդ խնդրի լուծումը գտնել, և հելլենական քաղաքակրթությունն անվերադարձ անկում ապրեց:

Հայե՛րն էլ ժամանակին չեն կարողացել լուծել այն, շումերներն էլ, ղպտիներն էլ, հրեաներն էլ, հռոմեացիներն էլ, արաբներն էլ, ռուսներն էլ, ինգլիզներն էլ… ո՞ր մի տիրող ազգին հիշես:

Ցայսօր այդ խնդիրը դեռևս իր վերջնական լուծումը չի գտել:

Իսկ հինգերորդ աստիճանի հավասարման տեսքն ամբողջովին թռել է մտքիցս:

Ողորմա՛ծ Տեր, փրկի՛ր մարդկանց անկանխատեսելի աղետների այս շարքից…

Երազ 6 կամ երազակերտ գեղջկատիկնիկ

Կարմիր «Զապորոժեցով» սլանում եմ խաղողի այգուս ուղղությամբ:
Ոչ մի կերպ տեղը չեմ բերում, թե երբ հասցրի ետ գնել արդեն հարազատ դարձած այս մեքենան, որը վաճառել էի լևոնական դժվար տարիներին՝ փողը փոխվելուց մեկ ամիս առաջ: Վաճառքից եկած հին փողով գումարն այդպես էլ քոռ ու փուչ եղավ, պրծավ: Ինչ որ է, հիմա գոհ եմ, որ նորից վարում եմ նույն մեքենան: Կարծես թե երբևէ չեմ էլ ծախել:
Հասնում եմ խաղողի այգի: Խոնավության նշույլ անգամ չի երևում. ծարավե՛լ է այգիս:Վազերի տերևները խեղճացած են՝ չորանալու եզրին:
Տարօրինակ է... այգում ես երբևէ հոլիկ չեմ սարքել, բայց հիմա՝ կա: Այս ո՞ր բարի քեռին է ինձ համար հոլիկ պատրաստել: Ինչ որ է, ներս եմ անցնում և վերցնում անկյունում դրված բահը:
Պետք է բարձրանամ մոտակա բլրի գագաթը և ջուրը թեքեմ այգուս կողմը: Այլևս հերթի սպասել չեմ կարող. այգին լրիվ ձեռից կգնա:
Ջուրը կապում եմ, որոշ ժամանակ նայում հարևան այգիների կողմը: Ոչ ոք չի երևում: Իջնում եմ իմ այգին, պառկում հոլիկում դրված փայտե թախտին և շուտով քնով անցնում:
...
Ինքնաթիռը վայրէջք է կատարել Մոսկվայում: Ընդամենը մեկ օր ունեմ իմ տրամադրության տակ, որ այցելեմ եղբորս: Հետո պետք է ճանապարհս շարունակեմ դեպի հեռավոր գործուղման վայր: Այս անգամ մենակ եմ գնում գործուղման: Պատասխանատվությունը մեծ է, և անհանգիստ եմ դրա պատճառով:
Եղբորս անպայման պետք է տեսնեմ, որովհետև մայրս հետս ծանրոց է դրել նրա համար: Կկարողանա՞մ գտնել նրան. ընդամենը մի անգամ եմ եղել մոտը, այն էլ՝ շատ կարճ ժամանակով և շատ վաղուց: Ավտոբուսի պատուհանից վերջապես ծանոթ շենքեր եմ տեսնում և իջնում կանգառում:
Շենքի մուտքն ու բնակարանի համարը չեմ մոռացել: Կոմունալ բնակարան է, իրենից բացի մի այրի էլ է ապրում իր երեք մանր երեխաներով:
Դուռը հենց նա է բացում, հարցական նայում դեմքիս:
- Вам кого?...
Չաղլիկ, տարեց կին է. երևում է, որ ամբողջովին թաղված է հոգսերի մեջ: Կյանքից դժգոհ է ու բարկացած տեսք ունի:
- Я к брату, Сурену,- ասում եմ և դռան շեմքին դնում ձեռքիս ծանրոցը:
- Ну, да... войдите, вот это его комната. Нет спасения от этих… խոսքը չավարտած՝ արագ հեռանում է դեպի զզվռտվող երեխաների կողմը, որոնց ձայներն արդեն ճչոցների են հասնում:
Ենթադրում եմ, որ վերջին բառերն ինձ չէին վերաբերվում, այլ սեփական երեխաներին:
Իրերով մուտք եմ գործում եղբորս սենյակը: Սեղանին գինու և գարեջրի դատարկ շշեր կան:
Առավոտյան դուրս է եկել տնից և չի հասցրել մահճակալը կարգին հավաքել:
Որոշ ժամանակ պատուհանից մտահոգ դուրս նայելուց հետո համարձակվում եմ նորից անհանգստացնել բարկացկոտ հարևանուհուն: Դժգոհ տեսքով ասում է, որ Սուրենը սովորաբար տուն է գալիս ուշ երեկոյան:
- Кто знает? Может сегодня рано придет, не знаю. Ждите, если хотите…- ասում է այն տոնով, կարծես շնորհ է անում ինձ:
Մինչև թռիչքս դեռ շատ ժամանակ ունեմ: Որոշում եմ սպասել:
Պառկում եմ չհարթված մահճակալին և քնով անցնում:
...
Ուսանողական ընկերներիս հետ եմ:
Ծնունդ ենք նշում: Կես-լուրջ, կես-կատակ, երբեմն էլ անկապ-անկապ ու կարճ կենացներ ենք ասում ու խմում: Այնուհետև կուրսեցի աղջիկներին ու իրենց ընկերուհիներին, որ ներկա են հյուրի կարգավիճակով, փոխնեփոխ հրավիրում ենք պարելու, հաճոյախոսություններ անում նրանց:
Բոլորս բարի ենք ու սիրալիր:

Բայց ես ներքուստ անհանգիստ եմ: Չհանձնած քննություն ունեմ, իսկ վաղը լիկվիդացիոն շրջանի վերջին օրն է: Երևի նորից չկարողանամ հանձնել. ոչ գրքեր ունեմ, ոչ էլ դասախոսությունների տետրակ, որ պարապեմ: Ունենայի էլ՝ չէի հասցնի: Վա՛յ թե վերջին կուրսում դուրս մնամ համալսարանից և այդպես էլ դիպլոմ չստանամ: Ի՞նչ պատասխան պիտի տամ ծնողներիս...
...
Արթնանում եմ:
Եղբայրս ժպտադեմ ինձ է նայում: Վեր եմ թռչում տեղից, գրկախառնվում ենք:
- Լույս քեզ տեսնողի՛ն. ու՞ր ես կորել, չկաս: Մի քիչ էլ ուշանայիր, ինքնաթիռիս չէի հասնի:
- Չգիտեի, որ գալու ես, թե չէ՝ կգայի դիմավորելու:
Խոսում, զրուցում ենք դեսից-դենից: Սուրենը բացում է ծանրոցը, ուրախանում մորս ուղարկած լավաշով, պահածոներով, չիրերով:
Պատրաստվում եմ դուրս գալ: Եղբորս չեմ թողնում, որ գա ուղեկցի: Բայց բակում արդեն մութ է, և փոշմանում եմ: Երկար թափառում եմ կիսամութ փողոցներով, որ գտնեմ մետրոյի մուտքը: Այդպես էլ չեմ գտնում...
...
Արթնանում, նայում եմ հոլիկի անապակի պատուհանից դուրս: Վազերի բների մոտ լայն լճակներ են գոյացել: Ժամանակն է, որ բլրի գագաթից ջրի ուղղությունն արդեն փոխեմ: Ելնում եմ թախտից, բահը ձեռքս արած բարձրանում բլուրն ի վեր: Դիմացից բարկացած տեսքով մի ծերունի է իջնում, դժգոհ ու սպառնալից կտրում առաջս.
- Ինչու՞ ես ջուրս կտրել:
- Բա ի՞նչ անեի. հո չէի՞ թողնելու, որ այգիս չորանա:
- Քո հերթի՛ն ջրեիր. հիմա ի՛մ հերթն է:
- Մոսկվա էի գնացել՝ գործուղման: Երկու ամիս է՝ չեմ ջրել, իսկ հերթս, ով գիտե, երբ կհասնի:
- Դա ինձ չի՛ վերաբերում,- չի զիջում ծերունին,- ինչու՞ պիտի քոնի փոխարեն իմ այգին չորանա:
- Իսկ ավելի լավ չի՞լինի, որ ոչ իմը չորանա, ոչ քոնը...
Այդպես երկար վիճում ենք, մինչև արթնանում եմ:
...
Խաղողի այգիս վաղուց է ձեռից գնացել չջրվելու պատճառով: Վազերն էլ են արդեն քանդել-տարել: Այնտեղ հոլիկ երբևէ չի եղել, և երբեմնի բերքառատ այգիս հիմա ամբողջովին ամայի դաշտ է վերածվել:
Անձնական մեքենա հիմա չունեմ, որովհետև կարմիր «Զապորոժեցս» իրոք ծախել եմ դեռևս լևոնական դժվար տարիներին, երբ նույնիսկ հաց չէր ճարվում:
Եղբայրս Մոսկվայում մի կարճ ժամանակ մնալուց հետո վերադարձավ, ընտանիք կազմեց, երեխաներ ունեցավ, պահեց-մեծացրեց: Ցավոք՝ մի քանի տարի առաջ մահացավ ստամոքսի անբուժելի հիվանդությունից:
Ինչ վերաբերում է դիպլոմիս, ապա համալսարանը փայլուն եմ ավարտել և չեմ հիշում, որ երբևէ հասած լինեմ լիկվիդացիոն շրջան:

Ահա այսպիսի սուտլիկ երազներ:
Իսկը որ՝ Թումանյանի «Սուտլիկ որսկանը» տվին-անցան տնաշենները...
Մի բան է միայն ինձ սփոփում. հանգուցյալ մայրս կենդանության օրոք հաճախ ասում էր, որ երազում պարզ ջուր տեսնելը բարի նշան է:

Երազ 7 կամ երկու այց սարահարթի եկեղեցի

Կանաչազարդ, դիք սարալանջով բարձրանում եմ դեպի գագաթ:
Որքան վեր եմ բարձրանում, այնքան վերելքը դժվարանում է: Գագաթ տանող ոչ մի արահետ չի երևում. ամենուր թավ ու թաց կանաչ խոտ է, որի վրայից ոտքերս ինքնաբերաբար սահում են ցած: Սարահարթի եզրին հասնելուն ընդամենը մի քանի մետր է մնացել, բայց չեմ կարողանում դրանք հաղթահարել: Ոտքերս սկսում են ծանրանալ:
Նորից ու նորից եմ փորձում:
Ի վերջո փորսող տալով, գերմարդկային ճիգերով կառչելով խոտերից ու մանր-մունր թփերից, հայտնվում եմ սարահարթի վրա:
Թեթևացած շունչ եմ քաշում: Ընդարձակ, կանաչ սարահարթ է՝ կենտրոնում տուֆակերտ եկեղեցի: Գեղեցի՛կ տեսարան է:
Մոտենում եմ եկեղեցուն, պտտվում չորս կողմը: Ծանոթ է թվում ու հարազատ:
Դռան փակին կողպեք չկա, պարզապես ծածկած է: Հրում եմ դուռը և ներս մտնում:
Եկեղեցու սրահն ընդարձակ է ու լուսավոր: Ներսից եկեղեցին ավելի մեծ է երևում, քան դրսից էր թվում:
Մոտենում եմ կենտրոնում գտնվող ջրավազանին: Պարզ է: Եկեղեցին բնական աղբյուրի վրա է կառուցված: Սրբազան ու բուժիչ ջուր է երևի: Ավազանի հատակին հատուկենտ մետաղադրամներ են երևում: Ուրեմն եկեղեցին այցելուներ է ունենում: Լավ է, երբ մարդիկ ունակ են զոհաբերությունների: Մեկն իր դրամն է զոհաբերում, մեկն իր ժամանակի մի մասը սիրով հատկացնում է աղոթելուն ու մոմ վառելուն, մյուսն ինքզինք ամբողջովին նվիրաբերում է Աստծուն:
Կռանում, մի բուռ ջուր եմ խմում աղբյուրից: Հրաշալի՛ ջուր է. մտածում եմ, որ ամեն եկեղեցի պետք է սրբազան աղբյուր ունենա իր ներսում, այլապես՝ եկեղեցի չէ: Կամ գուցե եկեղեցի է կոչվում, բայց չի ծառայում այն Աստծուն, որն առկա է ամեն մարդու ներսում: Չէ՞-որ ամեն մարդ Աստծո տաճար է:
Հայացքս հառում եմ դեպի վեր: Համեստ գմբեթ է՝ առանց զարդաքանդակների ու սրբապատկերների: Նույնը չես ասի գմբեթից ցած հավասարաչափ դասավորված տասներկու լուսամուտների և դրանք զարդարող բոլորանախշ քիվերի մասին: Լույսի և ստվերի խաղը զարդաքանդակներին յուրահատուկ խորություն է հաղորդում: Ծանոթ զարդանախշեր են՝ այնքան ծանոթ, որ թվում է, թե ինքս եմ ինչ-որ ժամանակ հորինել ու քանդակել:
Իսկ սա հենց այն եկեղեցին չէ՞, որ...
Աջ կողմի փոքրիկ աղոթախցի հատակի մոտ պետք է որ գաղտնարան լինի: Ներս եմ անցնում, քարերից մեկի աջակողմյան եզրը մատներով հրում դեպի պատը: Եթե հետևում խոռոչ կա, քարը պետք է տեղաշարժվի: Այդպես էլ կա... ձախակողմյան եզրը դուրս է ցցվում: Հանում եմ քարը և տնտղում վաղեմի գործիքներս: Մուրճի փայտե պոչը համարյա լրիվ մոխրացել է: Ձեռքով մաքրում եմ ինչպես մուրճի, այնպես էլ երեք մեծ ու փոքր սեպիկների վրա նստած մետաղական ժանգը: Մուրճն ու սեպիկները գրկած՝ իջնում եմ սարալանջի հյուսիսային կողմում գտնվող ձորը: Ձորի հարավային լանջին հսկա հացենիներ են աճել: Դրանցից մեկի վրա հարմար ճյուղ եմ գտնում, սեպիկների օգնությամբ նոր կոթ սարքում մուրճի համար: Ապա հետ եմ գալիս եկեղեցի, գործիքները դնում գաղտնարանում և քարով նորից ծածկում:
Թող մնա՛ն:
Ո՞վ գիտե, գուցե դարեր անց նորից պետք գան...
...
Հայտնվում եմ եկեղեցու բակում:
Բակի կենտրոնում մեծ, փարթամ հացենի է աճել, որի ստվերում անշարժ նստած են երեք սևազգեստ վանականներ: Ինձ տեսնելուն պես իրար են անցնում և ահաբեկված ցրվում ամեն մեկը մի կողմ:
Կանչում, ներշնչում ու համոզում եմ, որ չվախենան, ապա հարցնում եմ այդպես ահաբեկվելու պատճառը:
Վանականները կամաց-կամաց ուշքի են գալիս և վերջապես տիրապետում իրենց:

- Քեզնից չէ, որ վախենում ենք,- արդարանալով ասում է ճերմակախառն մորուքով ամենատարեց վանականը,- ծառի տակ նստած՝ ահով սպասում էինք այն թռչնին, որն, ուր որ է, նորից է գալու:
Իրոք, հորիզոնում մի սև կետ է երևում, որը մոտենում է ու խոշորանում: Արդեն երևում է, որ հսկա, սև չղջիկ է: Մի կարճ ակնթարթ ինքս էլ եմ ահ զգում և անմիջապես ինձնից վանում այն: Չէ՞ որ աշխարհում ոչինչ չի կարող ինձ դույզն-ինչ վնաս պատճառել:
Թռչունն արդեն մեր գլխավերևում է: Անվրդով դիտում եմ նրա վարքը: Կարմիր, խոշոր աչքերը սպառնալից են ու հրաբորբոք: Մերթ ընդ մերթ չարագույժ կռինչ է արձակում, որը նման չէ որևէ հայտնի թռչնի ձայնին:
Վանականներն, իմ պահվածքից հավանաբար քաջալերվելով, մնում են անհողդողդ:
Թռչունը սկսում է կերպափոխվել և մեկը մյուսից ահարկու տեսքեր ընդունել: Հետո դանդաղ սկսում է իջնել ցած: Իջնելուն զուգընթաց՝ մարմնի չափերը փոքրանում են: Ի վերջո, երբ արդեն նստում է գետնին, նմանվում է խղճուկ բվի ձագի: Թևերն անզոր թափահարում է, կարծես խնդրում է խնայել իրեն:
Շրջվում եմ և հանդարտ քայլերս ուղղում դեպի եկեղեցի: Վանականները փութկոտ գալիս և կանգնում են իմ առջև: Նկատելիորեն հուզված են, աչքներին արցունք է շողում: Չգիտեմ՝ երջանկությունի՞ց է դա, թե՞ երախտագիտությունից:
- Ո՞վ ես, տե՛ր...- հարցնում է նրանցից ավագը հուզմունքից դողացող ձայնով:
- Մի՛ ասեք ինձ «տեր» և մի՛ եկեք իմ հետևից,- ասում եմ բարյացակամ ժպիտով,- ես ընդամենը նա եմ, ով ժամանակին իր ձեռքերով կառուցել է այս եկեղեցին: Հուսով եմ, որ այսուհետ որևէ սև թռչնի չեք թողնի մուտք գործել այստեղ, որքան էլ այն ահարկու և հզոր երևա...
Վանականները երկյուղածությամբ ու հարգանքով խաչակնքում են և մնում տեղներում կանգնած:
Զգում եմ, որ հայացքներն ինձնից չեն կարողանում կտրել: Երևի չափից դուրս արտառոց ու հնաոճ տեսք ունեմ:
Մտնում եմ աղոթախցիկ, բացում գաղտնարանը: Մուրճի կոթը նորից է մոխրացել: Գործիքների երկաթյա մասերն էլի ժանգակալել են: Հավաքում եմ դրանք և իջնում ձոր:
Հացենիների քանակը շատացել է: Բոլորն էլ փարթամ, առողջ ծառեր են:
Մուրճին նոր կոթ եմ հարմարեցնում և վերադառնում աղոթախցիկ:
Այս անգամ հետս անուշահոտ յուղի մի փոքրիկ սրվակ էլ եմ բերել: Յուղով օծում եմ մուրճն ու սեպիկները, որ այլևս չենթարկվեն ժամանակի քայքայիչ ազդեցությանը:
Գործիքները դնում եմ գաղտնարանում և խնամքով ծածկում քարով:
Թող մնա՛ն:
Դարեր անց նորից պետք կգան: